## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

*Հետազոտությունների այս ժողովածուն «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» մատենաշարի չորրորդ գիրքն է: Նրա հրապարակումը համարեցված է հայ էսթետիկական մտքի պատմության հետազոտության սկիզբը նշանավորող Ա. Ա. Ադամյանի «Միջնադարյան Հայաստանի էսթետիկական հայացքները. Վաղ ֆեոդալիզմի դարաշրջան» կլասիկ աշխատության լույս տեսնելու 45-ամյակին: Այս հատորը ականավոր հայ փիլիսոփա-գեղագետի ու երաժշտագետի հանդեպ խոր և անչափ հարգանքի ու երախտապարտության լոկ համեստ արտահայտությունն է:*

*Գրքի առաջին բաժինն ընդգրկում է հոդվածներ, որոնք նպատակ են հետապնդում 1. դարերի սահմանագծին ճշգրտել այդ պատմության հետազոտության մեթոդաբանական սկզբունքները և 2. փորձել նորովի ներկայացնել որոշ հայ գործիչների էսթետիկական հայացքները: Հեղինակները հստակ գիտակցում են, որ առաջ քաշվող տեսակետները կարող են պարունակել վիճահարույց հարցեր և ուստի հետագա քննարկման և ճշգրտման հիմք դառնալ:*

*Երկրորդ բաժնում զետեղված են Ա. Ա. Ադամյանի կյանքի և գործունեությանը առնչվող բազմածավալ նյութերի լոկ մի փոքր մասը (նրա որոշ աշխատությունները, ընդարձակ նամականու մի քանի նմուշ, որը կարոտ է հրատարակման, և որոշ ժամանակակիցների հուշերը):*

*Այս հրապարակումները թույլ կտան ընթերցողին թեկուզ և մասնակիորեն հաղորդակից լինել Ա. Ա. Ադամյանի՝ այդ արտասովոր մարդու և մտածողի, XX դարի մեծագույն հայ գեղագետի, Հայաստանում էսթետիկական մտքի պատմության հետազոտության հիմնադրի և խիկական դասականի վսեմ անձին:*

# ОТ СОСТАВИТЕЛЯ

*Предлагаемый вниманию читателей сборник исследований является четвертой книгой серии "Из истории эстетической мысли в Армении". Выпуск ее приурочен к 45-летию выхода в свет классического труда А. А. Адамяна "Эстетические воззрения средневековой Армении. Эпоха раннего феодализма", который знаменовал начало научного изучения истории эстетической мысли в Армении. И данный том лишь скромное выражение безмерного уважения и признательности к памяти выдающегося армянского философа-эстетика и музыковеда.*

*Первый раздел книги включает статьи, ставящие цель: 1) уточнить на рубеже веков методологические принципы изучения этой истории, а также 2) попытаться в новом ключе представить эстетические взгляды некоторых армянских деятелей. Авторы ясно представляют себе, что выдвигаемые ими точки зрения и концепции могут содержать спорные моменты и стать основой для дальнейшего обсуждения и уточнения.*

*Во втором разделе представлена небольшая часть материалов, относящихся к жизни и деятельности А. А. Адамяна: несколько писем из эпистолярного наследия ученого, ждущего своей публикации, некоторые работы А. Адамяна и воспоминания ряда современников о нем.*

*Эти материалы позволят читателю, хотя бы частично приобщиться к светлой личности А. А. Адамяна - незаурядного человека и ученого, крупнейшего армянского эстетика XX века, основоположника и подлинного классика*